թուզերը որոց մէջ որ զարի կը դանուի. ծա-  
ռայն իւր տիրոց հրամայածին պէս կընէ  
եւ մէշենին դարի կեցած թուզերը զնելով  
բաղիս փաշային կը բերէ: Անմիջապէս փա-  
շան մրգավաճառը հանչել տալով կը հար-  
ցունէ թէ այդ թուզերը ուսկից առիր: Մըր-  
գավաճառը ամենայն պարզմատութեամբ թու-  
զերը իրեն ծախար մարդը կիմացնէ: Փա-

շան գողը բերել տալով կստիպէ զինքը  
վերջապէս իւր գողութիւնը խոստովանելու:  
Դողը զարմանայով կրսէ փաշային. Տէր,  
Խոտուժմէ եւ ինձմէ զատ ըրած գողու-  
թիւնս եւ ոչ մէկը դիտէր, ինչպէս կըլայ  
որ դուք խմացար: Փաշան այս խօսրին վե-  
րայ աւելի բարիմանով կը հրամայէ որ  
գողը կախաղան հանեն:

Խենդերուն տօնէր: — Կրօնական ա-  
մեն տեսակի խայտառակութիւնն միջին զա-  
րու մէջ ծնունդ առած է եւպայի մէջ.  
այս խայտառակութեանց տևնէն վերջին  
ծարը հասածը կրնամը համարիլ հաւատա-  
րննութիւնը: Այն դարուն ծիծաղաշարժ  
խայտառակութիւններէն կրամ այսպէս ըստնք,  
արարողութիւններէն մէկն ալ էր խնեպե-  
րուն տօնը, որ լստ եւրապացւոց ծննդեան  
տօնէն մինիւ Յայտնութիւնը կը կատար-  
ուէր, զբեմէ տարւոյն առաջին օրը. այս  
տօնին մէջ հեթանուութեան ժամանակի  
կատարուած Ստուռբական տօնից մի քա-  
նի ցիշասակնները կարթննային:

Այս տօնին խիստ կուրախացնէր այն խեղն  
կղերիկոսները որ վայրկեամ մը քահանացից  
եւ եսլիսկոպոսաց տեղը կըրունէին, ինչպէս  
Հռովմ գերիները իրենց տիբոց տեղը, Ստ-  
ուռբական տօներուն ատեն: Խենդերան  
մէջն եպիմարպու մը կընթէին, մեռքը  
զաւական մը կառաջանին եւ զուխն ալ թագ  
մը կըրնէին, եւ այսպէս նկեղեցւոյ մէջ կը  
պըտքառնէին. այս համեմարեկ եպիմար-  
պոսը բաւական ատեն Թատերական մար-  
զու մը կերպարանը կառնէր. Մի քանի խեն-  
դեմ դիմավարեան, ումանք ալ երկաներն  
սեւցուցած սատանային կերպարանըէն ալ

աւելի, եկեղեցւոյ դասին մէջ կըլպարէին,  
խենդ ու խելաւ երգեր երգելով: Սարկա-  
ւագերը եւ կիսասարկաւագեները սեղանին  
վրայ բազմած, ժամարարին զիմաց երշիկ  
եւ ուրիշ բաներ կուտէին եւ զանազան ըմ-  
պելիք կը խմէին: Երբ պատարազը լմնար,  
իւրաքանչիւր որ վաղելով եւ ցատկելով ե-  
կեղեցին որւս կելլէր. այս տեսարամեք  
հաւատացեց ցայրակղուրեան եւ ոչ  
րէ շինուրեան պատճառ կըլլար.  
ումանք դուրս եկած ատենին զգեստնին  
ալ եկեղեցին կմտունային եւ բոլորովին  
մերկ դուրս կելլէին: Միջին դարու աս-  
տուածաբաններէն մին կրսէ թէ, եկե-  
ղեցւոյ մէջ չորս տեսակ պար կըլլար. սար-  
կաւազոց սարը, քահանացիցը, տղայոցը  
կամ կղերիկոսացը, եւ կիսասարկաւազացը;  
Իշուն սրբնելի ծայնը այս տօնին գըւ-  
խաւոր սրբառոյն թեանց մէջ մեծ տեղ կը  
բռնէր: Թիֆաստութեան օրը կը կատεրուէր  
իշուն տօնն ալ. Նպատակնին էր այս խո-  
նարի եւ օգտակար կենդանին պատուել, որ  
Ցիսլոսի Քիֆասոսի ծննդեան ներկայ ղըտ-  
նուած, եւ գջուուս Քիֆասոս հրուսաղէց  
ըրբած էր: Սանան եկեղեցին էր ուր իշուն  
տօնը մեծաւ հանդիսիւ կը կատարուէր. Ե-  
րեկոյեան ժամերգութիւնը սկսելէ յաշաջ  
քահանայր թափօրու մայր նկեղեցւոյ զան  
առօտե կուզային: Երկու կանոնիկոս եցը  
կըրունէին եւ կառաջնորդէին մինչեւ այն  
սեղանը, ուր ուրիշ կանոնիկոս մը սրբառ-  
ութեան կարգը կը կարդար եւ այն մար-  
դոց անունները կուտար, որ այն հանգիսին  
ներկայ պիտի զըտնուէին: Պովէի մէջ,  
մինչեւ եկեղեցւոյ դրան առջեւ, իշուն կըռ-  
նակը երիտասարդ աղջիկ մը կը զնէին, որ

Առւրբ կոյսը կըներկապացնէր, իւր բաղկաց  
մէջ փորրիկ Յիսուսը բանած: Խոնարհ կեն-  
դանին գեղեցիկ լաթով մը ծածկելով մին-  
չւ եկեղեցւոյ զատը կընթէին, տեսակ մը  
երգ երգելով առջիւն եւ ետևէ:

Հարկ չէ այս տեղ մանրամասնաբար ի-  
շուն համար կատարուած ուրիշ արարողու-  
թիւնները նկարագրել:

Այս ամբարիշտ սովորութիւնները գրէ-  
թէ չըս հարիւր տարի տեսնեցին, միջին  
դարու մարդոց տղիտութեան եւ անասնոյ  
հաւասար խելք ունենալուն շնորհիւ:

(Ցոյն.)



Ա.Ա.ՀԱՆՔ Ի ՎԻԼԵԶԳՈՒՑ: — Երկիրն ի  
պէտս մարդոյ եւ կենդանեաց կմատակա-  
րաբէ ամեն բարիք. Ճտենք նա իւր խորե-  
րու թագուն գոնձերը բանալ երբ մարդն  
կաշխատի զայն գտնել:

Հողագնտոյս խորերն մարդուս ծայնն չցո-  
րեր հասնիլ նա մունջ ու խուլ է, բայց  
հանճարն ու ժիր ծուռքերն կանցնին ու կը-  
թափանձեն նորու խորերն, կպեղնեն զայն  
եւ տակն ու վերաց կընեն:

Վիլիչաց աղանձնն եւս մեր յառաջ  
բերած երկիր զիւտերէն մին է, որ Վի-  
լիչ անունով հովիւ մի զայն գոտած է 1250  
թուականին հին Ենհաստանի կալիցիս կո-  
չուած գուառին կողմերն իւր խաշերն ա-  
րածելու պահուն, որ երկրիս վերայ դրտ-  
նուած աղանձներէն ամենէն մնծն կհա-  
մարուի լինել:

Գաղիմիր Միծ Ենհաց թագաւորն առա-  
ջին անգամ զայն զործել տուած է. Աւ-

գոստ Բ.ի ժամանակին աղանձնութիւնն  
աւելի եւս կարգադրուեցաւ եւ շատ ըն-  
դարձակեցաւ:

1772 ին Ենհաստանի բաժանման ժա-  
մանակ, Վիլիչաց Աւստրիոյ տէրութեան  
մեռք անցաւ. յորմէ յետոյ սկսաւ նոյն  
հանքն տարուէ տարի աւելի եւս փորուիլ,  
որ այմէ կասուի թէ, տարին մէկ միլիօն  
կենդինարի չափ աղ կհանմի. որ Աւստրիոյ  
այլ եւ այլ նրիիններն կըդրկուին, ինչպէս  
նաեւ ուրիշ տեղեր:

Այս ընդարձակ աղանձներին ստորերկեայ  
խորերն շրջող ճանապարհորդը կպատմեն  
թէ, միշտ բազարի մի նմանութիւնը ունի,  
որոյ մէջ մտնելու համար երկոտասան  
դրւներ եւ մուտքեր շինուած են. Ներսի  
կողմն մէծամեծ բնակարաններ եւ ուրիշ  
սրանչելի նշաննուր շինուածքներ կան:

Կպատմեն թէ, ցարդ եօթն իբրարու տակ  
դատիկներ կամ կամարներ փորուած են,  
որոց վերնայարկին առաստաղներն փայտա-  
շէն, իսկ զետնայարկինը աղէ փորուած կա-  
մարներ են:

Ազի շարքերն աւագաքարի, կափ եւ  
ուրիշ բանի մի տեսակ քարերու մէջ կը-  
գտնուի, որ ամեն օր 1500ի չափ գոր-  
ծաւորներ լաստերներով այս ընդարձակ  
տեղույն մէջ կդործն եւ աղ կհանեն, ո-  
րոյ լայնութիւնն կհաշուեն հիւսիսէն հա-  
րաւ, 3800 ոտնաշափ, երկայնութիւնն ա-  
րեւելքէն արեւմուտք 9720 ոտնաշափ,  
իսկ խորութիւնն 1520 ոտք, եւ ուր 100-  
էն աւելի միեր հանուած աղերն կընելու  
կծառայեն եւ որոց ախոռն հանքին մէջ  
աղէ փորուած ընդարձակ սրահներ են, ուր

ոմանք 7—8 տարի առանց դուրս ելելու  
կըթնակին:

Սրանչանօք կպատմեն նաեւ ակտնատես  
ու նետարբիր ճանապարհորդը այս աղա-  
հանքի մէջ յանուն Ա. Անտոնի կառուցեալ  
եկեղեցին, որոյ մուտքին առցնել պերճ ու  
յաղթ խաչելութիւն մի վնելն վրան Քրիս-  
տոսի արձանով, ներսն բեմ մի, խորան մի,  
ամբիոն մի, երկոտասան առաքելոց մար-  
դաշտի արձաններ, մեծամեծ սիւներ, կա-  
մարներ եւ ուրիշ զանազան զարդեր, ա-  
մենքն եւս աղի գեղեցիկ ու նարտարաշէն  
արուեստով բանդակուած:

Կպատմուի նաեւ թէ, աղոտ կաւով շըր-  
ջապատռուած ընդարձակ մին մի եւս կայ, որ  
աղի ջուր ունի եւ մէջը նաւակով կրնայ  
պարաւիլ:

Այս աղահանքն Աւստրիոյ կայսերութեան  
մէջ այն աստիճան հոչակուած է, որ շատ  
հնատրբիր անժներ բաւական հնուաւոր  
տեղերէ տեսնել կփութան:

Գործառորդ իւրեանց յատկացեալ սանդլսո-  
վին սովորած են վար իշնել, իսկ այցելութը  
հաստ պարաններով վար կիցեցնեն միհնել  
ասածին դատիկոն, ուրկէ ի խորն ճանա  
պարներ կան յարդարուած:

(Լոյս.)



## ԹԻՒ ՄԱՐԴԿԱՆՑ

### ԸՆԴ ԱՄԵՆԱՅՆ ԵՐԵՍ ԵՐԿՐԻ ԸՍՏ ՆՈՐ ՎԻՃԱԿԱԳՐԱՑ.

|          |             |
|----------|-------------|
| Եւրոպայ  | 301.200.000 |
| Ասիա     | 798.000.000 |
| Աֆրիկէ   | 202.000.000 |
| Ամերիկայ | 84.500.000  |
| Պկիկանիա | 4.500.000   |

Գումար 1.390.200.000

### ԸՍՏ ԿՐՕՆԻՑՆ

|              |             |
|--------------|-------------|
| Քրիստոնեայ   | 303.200.000 |
| Կռապաշտ եւլն | 987.000.000 |
| Մահմետական   | 96.000.000  |
| Հրեայ        | 4.000.000   |

Գումար 1.390.200.000

### ԱՇԽԱՄ. ԲՀԱԳՐԱԿԱՆ

Անցեալ տարւոյ սկիզբներում՝ բնիկ  
նոր՝ Զուղայեցի (Ասպահանցի) եւ բա-  
տական տարիներէ ի վեր ի Պիրմանստան  
Մանդլէ մայրաքաղաքում՝ վերաբնա-

կեալ չայազգի Մեծարքոց Մինաս Գ.  
Տէր խաչատուրեան կոչուած մի եռան-  
դուն անձն այսր ի Ս. Էջմիածին եկաւ  
յուստ եւ յերկրպագութիւն նուիրա-  
կան Վայրիո, եւ որպէս ինքնասաց, —  
յիշեալ անձն Պիրմանիոյ ինքնակալին  
մօտ նշանաւոր պաշտօն ունէր եւ երկ-  
րին վերոյ շատ եւ լաւ տեղեկութիւն-  
ներ ամիսոփած էր, ուստի յարմար ա-  
ռաթ սեպելով՝ խնդրեցի յիշեալ պա-  
րոնէն՝ զի որքան հմտութիւն ունի եւ  
կարող է մոաբերել՝ յատուկ նշանա-  
կուած Զէնկիլէրցի Տերացու Պողոս Պ. Մ.  
ձէպէճեանին գրել տայ գրած եւ  
տուածս հրահանգին համաձայն աշխար-  
հագրական եւ վիճակագրական կարե-  
ւոր տեղեկութիւնք Պիրմանստանի երկ-  
րին, ի-խանութեան, բնակչաց եւ այլոց  
վերայ, եւ որքան կարողացաւ հաղորդել՝  
հետեւեալ ըստ բաւականին հետաքրք-  
րական տեղեկութիւնքը ամիսոփուեցան,  
զորս արժան կհամարիմք հաղորդել հե-  
տաքրքիր եւ բանագէտ ընթերցողաց:

Ուելորդ չէ ասել, զի հետեւեալ  
տեղեկութեանց ստուգութեան կամ  
անստուգութեան նկատմամբ պատաս-  
խանատութիւնը Պ. Մինասին կվե-  
րաբերի.

Դիրք, օդ, գետք, քերք, ժառք, կեն-  
դանիք, եւ հանք երկրին: —Պիրմանը Հնդ-  
կաչինու ի հիւսիսային արեւմտակողմնէ:  
Երկիրն ընդհանրապէս լեռնոտ է,  
եւ շատ բարեբեր հովիտներ ունի: Յդը  
տաք է՝ բայց ոչ վնասակար:

Մեծամեծ գետեր ունի, յորոց են նշա-  
նաւոր Սալուէն, Զիթթանկ եւ իրա-  
ւատափի, որք եւ այս երկիրը կը ջրեն եւ  
շատ անգամ չափազանց յորդելով եւ  
բարձրանալով տեղատուութեամբ՝ երկ-  
րին մեծ մասը կողղուն: —Նաւարկելի  
է իրաւատտինը, որ Զինաստանի լեռ-  
ներեն բղիսեով երկիրը յերկու մասն  
բաժանած է եւ կթափի յ՛Ռվկիանուն  
Հնդկաց: Այս գետի երկու կողմում  
շինուած են մեծամեծ վաճառաշահ  
քաղաքներ, ուստի եւ յ՛Ռվկիանուն թա-  
փուած աեղէն դէպ ի վեր մինչեւ քսան  
աւուը ճանապարհ՝ մեծամեծ շողենաւ-  
ներ կարող են հանգիստ երթեւեկու-  
թիւն առնել:

Գլխաւոր բերքն է բրինձ, — որ հացի  
տեղ կծաւայէ ընդհանուր բնակչաց  
մէջ, — բամպակ, յորեան, սիսեւն, կըն-  
ճիթ, — զորիսիստ առատ կշինեն: — Երկրի

բնակչաց սիրելի կերակուրներէն մին է  
թէշը, որ դալար եղած ժամանակ կը  
թըջեն եւ վրան իւղ ածելով կուտեն.  
իսկ օտար երկիրներ յուզարկելոյ հա-  
մար նախ կըովեն եւ այնպէս ապա կու-  
զարկեն: Գլխաւոր վաճառքն է փայտը, —  
զորս փիղերու վերայ բարձած, կըերեն  
անտառներէն: Սովորաբար Եւրոպացւոց  
կվաճառեն Սակուան կոչուած ծառի  
փայտը, որ Պիրմանի լերանց յատուկ  
է եւ խիստ ընտիր իւր ուղղաձիգ եր-  
կարութեամբը եւ յարմարութեամբ ի  
շինութիւն նաւուց: — Այս տեսակ ծա-  
ռի անտառները կապականին ի սեփ-  
հականութիւն տէրութեան կամ ինքնա-  
կալի երկրին՝ եւ առանց կանխավճար  
պայմանի եւ սակարկութեան ոչ ոք  
կարէ հատանել:

Խիստ բազմատեսակ ծառեր կդըս-  
նին, որոց տեսակ եւ անուանք գրեթէ  
մեզ անծանօթ են, յորոց կհաւաքեն  
զմուռ եւ ուրիշ անուշահոտ խիժեր  
մեծ քանակութեամբ: — Հետաքրքրա-  
կան է բառի կոչուած արմաւենոյ նման  
ծառը, որոյ կատարէն կտրելով, ծայրը  
կտրամադրեն մի ամանի մէջ, որ նոյն  
ծառէն առկախ պէտք է լինի, եւ այն  
կտրուած ծայրէն կաթիլ կաթիլ կհա-  
ւաքուի մի գիշերուայ մէջ գրեթէ վեց

փունտէն (երկու հօխա) աւելի ամենա-  
քաղցր եւ սքանչելի մի հեղանիւթ, յոր-  
մէ կապատրաստեն ոգելից (արքեցուցիչ)  
ըմպելի եւ կգործածեն ի մեծարանս  
պատուաւոր հիւրերու: Սեափա կոչուած  
ծառի տերեւների մէջ ծխախոտ փա-  
թութած կը ծխեն առհասարակ արք  
եւ կանայք, իսկ նորա ոստերը հաւա-  
գելը քարի վերայ կլոսեն ջրով, յորմէ  
դեղնագոյն մի հիւթ կըպատրաստուի եւ  
նովաւ իւրաքանչիւր օր մի քանի անդամ  
մարմինները կօծեն: Այս հեղանիւթի ու-  
նեցած զարմանալի յատկութիւնն է  
մարմինը փափկացունել եւ տաքութեան  
ժամանակ զովացնել:

Մեծամեծ եւ բազմատեսակ կենդա-  
նիներ խիստ շատ կըդտնուին այս երկիր-  
ներում: Օրինակի համար, Փիղը, որ  
այս երկիրների մէջ մեծ օգուտ կըերե-  
թէ իւր աղագին ժանկիներու առեւ-  
տրով եւ թէ իւր սարսափելի ուժով,  
որով կօգնէ բնակչաց գրաստի տեղ,  
առանց որոյ անհնարին է խիտ անտառ-  
ներէն մեծամեծ ծառեր տանել ի նա-  
ւահանդիսու: — Առիւծ, Վագր, Յովազ  
եւ տեսակ տեսակ կապիկներով լիքն  
են անտառները, ուստի շատ վտանգա-  
ւոր է գիշերային ճանապարհորդու-  
թիւնը անտառների մօտէն: Եղջերուք

եւ ուրիշ որսի կենդանիք, ինչպէս նա եւ զանազան թռչունք ազատ կասրին այս երկրի մէջ ի շնորհս Պուռաւայականաց, որք չունին սովորութիւն ուժելոյ զմիս կենդանեաց:

Հանքերու կողմանէ մեծ հարստութիւն կայ, թէեւ բնակիչքն ըրգիտեն ըստ արժանւոյն արդիւնաւորել եւ գործածել, իսկ տեսակ տեսակ յակնթներ, ինչպէս կարկեհան եւ շափիղայ, խիստ առատ կլինին եւ հաւաքելով կուզարկեն յիւրապա ի վաճառ: Զարմանալի է զմրուխտի նմոն կանաչագոյն կեալ - ձեյն ( կանանչ քար ) կոչուած քարի հանքը, յորմէ կգտնուի մինչեւ 500—600 հօիմանոց ( 40—45 վիժ . ) կը տորներ. — այս տեսակէս չտիազանց մեծութեամբ մի քար կգտնուի Պիրմանստանի թագաւորի պարագի մէջ, զորեւրոպացի. Ճանապարհորդներէն կապահեն ի նախանձ չշարժելոյ համար: — Ասկւոյ եւ արծաթի հանքերը մինքան մշակուած չեն որչափ կապարի եւ երկաթի հանքերը: Մի տեսակ ոսկեգոյն եւ խիստ փայտն սաղի հանք եւս կայ, յորմէ կարելի է բաւական մեծամեծ կտորներ գտնել, գետնածուին երկք հարստա հանքեր կան, ինչպէս նաեւ նաւթի եւ ուրիշ տեսակ տեսակ իւղե-

րու հորեր, յորոց մեծ քանակութեամբ կվաճառեն Եւրոպացի վաճառականաց: Մարմարինի ամենազնիւ տեսակներ խիստ շատ են, որոնցմէ կշինեն ընդհանրապէս իւրեանց պաշտած կուռքերը. Կգտնուի նաեւ ակնոցի քարեր եւ մագնիսի հանքեր, եւլն, եւլն:

— Այս բոլոր բերքերը կամ լնգեւանք կտանին մինչեւ կալկաֆայ եւ Փոմպայ վաճառելոյ համար, եւ կամ Եւրոպացի վաճառականք բերքելով ընդհանրապէս զանազան կտաւեղէններ եւ կերպասեղէններ կփախանակեն հանքերու հետ եւ մեծ հարստութեամբ կվերադառնան:

Բնակիլք: — Բնակիչք այս երկրի են պիրմանք, Շամք, Յեօտեայք, Քըլենք, եւ Տլայինք, որք առաջ առանձին առանձին թագաւորութիւններ կըկաղմէին, իսկ այժմ մի մասը Անգլիոյ հըպատակ եւ միւս մեծ մասը, որք գրեթէ կլինին 4—5 միլիոն բնակիչ, հպատակք են ընդհանութեամբ ինքնակալ կայսերութեան Պիրմանի:

Կառավարութիւնն, քագաւորական յարողութիւն եւ արարողութիւն նորաւ: Խշխանութիւնն է քացարձակ միապետական: Այժմու կայսեր անունն է Միետմէն: Գահակալութիւնը իբր ժառանգական է: — Թագաւորի մահուանէն դկնի

նորա որդւոց մէջ վէճ եւ կուիւ կծագի  
թէ նվ պէտք է իւր հօր գահը ժա-  
ռանդէ, եւ ով որ զօրաւոր գտնուի,  
միւսները հալածելով, եւ եթէ ուզէ  
աւելի պահով լինել, աքսորելով միւս  
եղայրները եւ կամ զնոսա սպանանե-  
լով, կըհոչակուի թագաւոր: Երբ այս  
նոր յաղթող թագաւորս արքունի պա-  
լատը մոնէ, իւր առաջեւ կըզնէ ակա-  
նակուռ ոսկի հաշի այլանը, որ ինախ-  
նեաց մնացած է իրը ինչան թէ որպէս  
առաջ որ լինի այն հաւը, նու է թագաւ-  
որ, եւ անմիջապէս կհրամայէ մայրա-  
քաղաքին ամենաբարձր զանգակատան  
վերայի ահագին թմբուկը ի վայր իջու-  
ցանել եւ պատուել, եւ իտեղի նորա  
մի ուրիշ նորը դնել: Այս թմբուկը  
խիստ մեծ եւ շատ զօրաւոր բոլցիւն  
ձայն ունի, զոր կհարկանեն միշտ աւուրը  
իւրաքանչիւր ժամերը ցոյց տալոյ Հա-  
մար մի մեծ զանգակի հետ, որ եւ նո-  
րա մստ կախ է արած: Ապա բոլոր  
Քրմապետը եւ Քուրմը կհաւաքուին  
թագաւորի օծումը կատարելով համար  
Դենպետը պար աւեալ ի քրմապետաց,  
ի միջավայրի ունելով զյաջորդ թագաւ-  
որն անուշահոտ ջրով կօծէ, եւ հադ-  
նելի իւրաքանչիւր զդեստի վերայ ա-  
ռանձին եւ յատուկ աղօթքներ կարդալով

կհագցունէ թագաւորին, եւ ի դաւին  
ծաղկեայ մի պսակ զնելով կրազմեցու-  
նեն թագաւորական գահի վերայ: Ապա  
բոլոր նախարարներ ծանրագին ընծա-  
ներով կներկայանան թագաւորին եւ  
երկրպագութիւն կըտան: Թագաւորն  
կընտրէ ինքեան օգնական չորս ներ-  
գործական նախարար եւ նոցա պաշտօ-  
նատեղիները կմնան չորս երեւելի քա-  
ղաքաց մէջ, որոց անուամբը եւ նորա  
կըկոչուին ինչպէս, Քափան—մենի, Կիյ-  
վուն—մենի, Շամշան—մենի, Ենան-  
կամ—մենի. մենի կնշանակէ փոխար-  
քայ կամ առաջին նախարար: Ապա  
գրէթէ միշտ թագաւորի պարատը կը  
կենան մեծամեծ ուոճիկներ ստանալով:  
կրօնէք եւ Պուտուայականութիւն: —  
Պիրմանստանի մէջ բաց ի կռապաշտու-  
թենէ՝ կան այլ եւ այլ կրօններ եւս,  
ինչպէս Քրիստոնէութիւն, Զրէութիւն,  
Մահմէտականութիւն, իսկ մեծ մասը  
կպաշտեն կռապաշտութիւնը: կռա-  
պաշտականք, որք բուն Պիրմանք կհա-  
մարուին, հոգեփոխութեան եւս կհա-  
ւատան եւ Պուտուայականք են: Բազմա-  
թիւ չաստուածներ ունին, որոց գլխա-  
ւորն է կռատըմայ, որում կը հաւատան  
երկնի եւ երկրի ստեղծումը եւ զնա մի-  
այն աշխարհի լուսաւորութեան պատճառ

կճանաչեն. Եւ իւրեանց միակ օրէնտգիրը կհամարին: Նոցա թուականը, որ պյժմ (ի 1876 - ի) է 1238 եւ կհաշուեն նորա (կոչարմայի) գլուռթեան սկիզբէն: Այս մեծ չաստուածոյս կուատունը կկոչեն Փիակի, յորում կոչուրմայի շրջապատեալ է բազմաթիւ կուռքերէ, եւ այն մեծ եւ սքանչելի ճարտարութեամբ շինուած կուատան մէջտեղը դըրուած է: Ոորա պատկերը կներկայացունէ այր մարդ ուկեզօծ մարմարիոնեաց քարի վերայ քանդակուած եւ ուկի աթոռի վերայ ծալլապատիկ նոտացրած, գեղեցիկ բանուածքով դեղնագոյն մի շրջազգեստ ձախ ուսէն կունակով սփուռուած է եւ նորա մարմինը կողմնակի կերպիւ կշրջապատէ. աջ ձեռքը ծունկին վերայ եւ ձախ ձեռքը արձակ թողուած է. ուր երկրպագուքն ծաղկանց փունջեր կընուիրեն: Միւս կուռքերը. — որք ընդհանրապէս շինուած են ուկիէ, արծաթէ, պղնձէ. քարէ, փայտէ, — երբէք չեն ներկայացուներ կանացի կերպարանք եւ կամ անպարկեշտ պատկերներ, այլ բոլորն եւս գրեթէ ծածկոյթով քանդակեալ եւ պարկեշտ ձեւով կատարեալ մարդոյ կամ տղայի կերպարանօք կերտուած են, ուղիղ ոտի վերայ կանդնած, կամ նստած, կամ աջ

ձեռաց վերայ կութնած — յեցեալ. — Եւ կամ ընկողմանեալ (պառկեցրած), նոցա իւրաքանչիւրն՝ անունը եւ սկզբնաւորութիւնը առած է թագաւորազանց մէկին մահուանէն զինի, որոց համար Պուտուայականք կհաւատան թէ՛ մահուանէն յետոյ չաստուածոց կարգը կըդասակալցին, ուստի եւ անմիջապէս նոցա արձանը կքանդակեն եւ ի կուատուն կըկանգնեն ի դասս չաստուածոց. Բաց ի կուատուններէն՝ ամեն տան մէջ կդանուին մի քանի կուռքեր, որք նոյն դանն պաշտպանը կհամարուին: Կերակրոյ ժամանակ նոցա առջեւ կշարուին եւ աղօթք կնուիրեն, եւ նախ նոցա բաժինի կերակուրը զատերով յատուկ ամանով կդնեն կուոց ընդառաջ, եւ յաջորդ երկրորդ օրը թունոց ի կերակուր տալով զայնս, դարձեալ բաժին կհանեն իւրեանց կերածներէն ամեն օր եւ ամեն անդամ:

Կրօնական տօնք, արարողուրիւնք, ուխտատեղիք, կուատունք, թաշիտենեական Աստուած, սովորութիւնք, պաշտօնեայք, Քրիստոնեայք, Հայք, Եւրոպ. — Ամեն տամի Ապրիլ ամսոյ մէջ կըկատարեն մեծ հանդիսիւ կուտայ չաստուածոյն տօնը, եւ մինչեւ երեք օր իւրարու վերայ ջուր կցանեն մեր Վարդավառի հին սոլո-

րութեան նման, իսկ հարուստները վարդեջով զիրար կթղթէն:

Նոցա լեռները կուատուններով լլզն են, որոց իւրաքանչիւրի մօտ շինուած են նաեւ քուրմերու համար բնակարաններ: Զես տեսներ երկրի ուր եւ իցէ բարձր մի գերք՝ որոյ ի կատարն շինուած չլինի հոյակապ մի կուատուն: — Սինկուն գիւղի մօտ Պօտոփիայ թագաւորէն շինուած մի մեծ կուատուն կայ, որոյ զանդակի մեծութիւնը կպատմեն լինել վեց կանգուն բարձրութիւն, 16 կանգուն տրամագիծ եւ գրեթէ մի կանգուն թանձրութեամբ եւ ծանրութիւնը 999999 վիսա: — «վիսան 3 ֆունտէն կամ մի հօխայէն աւելի է . . .»:

Շատ կսիրեն ուխտի գնալ հեռու տեղեր գտնուած կուռքերու, մինչեւ 15—20 աւուր ճանապարհ առւանց Ճանձրանալոյ՝ գրեթէ մեծ մասամբ բոկոտն եւ Հետիոտս կգնան այս ինչ կամ այն ինչ անուանի կուռքին գլուխը ծաղկեայ մի պսակ նուիրելոյ եւ նորա տաճարի մէջ խրախութիւն կատարելոյ համար. ուր միայն 3—4 օր մնալով կվերադառնան: Խիստ նախանձախնդիր եւ վրիժառու են ուխտագընացութեան մէջ գործուած յանցանաց համար, եւ մասնաւոր աւելի յար-

գանք կընծայեն այն ամեն սննդանց՝ որք բազմիցու գնացած են յուխտ ի հեռաւոր վայրս: — Միայն ջանփուշ — փիա կուռքի տօնին ատեն՝ որ Մանուկ քաղաքէն չորս ժամաւ հեռու համանուն գիւղաքաղաքի մէջ շինուած է, եւ կըկատարվի Օգոստոս ամսոյ մէջ, ամեն տեսակ անկարգութիւնը եւ անպարկեցած արարմանքներ անխտիր եւ ակնյայտնի կգործուին՝ բաց ի մարդասպանութենէ՝ գրէթէ տասն օր՝ ի պատիւ այն կուռքին՝ որոյ վերայ պասվիսի մի առասպել կտպատմեն: Իբրու այն թէ՝ իւրեանց նախնի թագաւորներէն մինը, նոյն Մանտու քաղաքի բնակչաց հրամայած է՝ որ ամենքն եւս գնան աշխատին մի ահագին կուատուն շինութեան վերայ: Ժողովրդը ամենայն սիրով այս հրամանը կկատարէ եւ ի գըլուխ կտանին այն հոյակապ շինութիւնը: Թագաւորը երբ կդնայ տեսնելոյ, կնշմարէ շինութեան մի կողմում զգալի մի պակասութիւն եւ կհարցունէ պատճառը: Նոքա միաբան կբողոքեն թէ՝ երկու եղբարք կան՝ որք երբէք չաշխատեցան եւ նոցա բաժինն է այն թերի մնացածը: Թագաւորն բարկանալով իսկոյն կհրամայէ զնոսա սպանանել բայց նոքա սպանուելէն յետոյ՝ ի դեռ փո-

խարկվելով՝ երբ թագաւորն նաւակով կվերադառնար իւր արքունիքը, սպանեալքն նաւուն զեկէն պինդ կը բռնեն եւ չեն թողուր առաջդնալ, սպառնալով միանգամայն ջրասոյզ առնել զնաւակն: Թագաւորն կզարհուրի եւ կհարցանէ թէ՝ դուք ի՞լ էք. նոքա (դեւքն) կիմացունեն թէ՝ այն սպանեալ երկու եղբարքն են եւ եկած են վրէժ լուծելոյ: Ուստի թագաւորն կիսուտանայ ինչ որ կամենան կատարել՝ միայն թէ խնայեն իւր կենաց հոքա կիմոդքեն որ այն շինուած հոյակապ կրտսունը իւրեանց անուանը նուիրէ եւ ի տարին միանգամ տասն օր յատկացնէ ուխտագնացութեան եւ լիակատար եւ սանձարձակ ազատութիւն շնորհէ ուխտաւորաց: Թագաւորն երդմամբ կուխտէ եւ կըկատարէ, որով եւ կազատի նոցա ուրուականէն: —

Այսպիսի բազմաթիւ չաստուածներէն զատ՝ որք հետզետէ աւելի բաշմանալոյ վերայ են, Պիրմանք կճանաչեն նաեւ յաշիտն նական մի Ասոռած, զոր կկոչեն թԱՂԻԱ. — ՓԻԱ(յաշիտն նական ասոռած), որոյ համար կասեն զի՞ տարեգլիսի օրը յերկիր կիսոնարհի, մարդկանց մէջ կը բնակի երեք. օր, եւ այն երեք օրը սուրբ կազակեն եւ մաքուր շորեր հագուած իրարու վերայ ջուր կըսրակեն: —

Մեծ բարեպաշտութիւն կհամարուի կըուատուներ շինել, որ եւ հարուստ անձանց համար գրեթէ վսեմ եւ գերագոյն պարագ կհամարուի:

Կուատուն կըմտնեն բոկոտն՝ եւ կիւրակէ օրեր, որ լրտնի հաշուով ութօրն մի անգամ է, սպիտակ շորեր հագած եւ մինչեւ երեկոյ կուատանց մէջ կաղօթեն եւ պաշտօն կնուլիրեն ծոմապահութեամբ. իսկ միւս օրեր միայն առաւօտ եւ երեկոյ կըդնան ի կուատուն աղօթելոյ համար:

Ի նշան բարեպաշտութեան՝ կուռքերու ձեռաց մէջ զդնեն ծաղկանց փունջեր եւ ընտիր կերակուրներ:

Գրէթէ ամեն կուատանց մէջ կըդտնուին՝ բաց ի քուրմերէ՝ կանացք, որք որչափ տգեղ լինին՝ մյոնքան աւելի յարգ եւ պատիւ կդտնեն ժողովուրդէն, վասն զի նոքա միշտ կըդան եւ կանանց գլուխներում վարդէ պակներ կըդնեն եւ իւրեանց բաղդը կհարցանեն: Այսպիսի կանայք կըկոչվինոդտերը սատսնային:

Զարմտնալի ազատութիւն կայ ամեն կրօնից համար, եւ ամեն կարգի մարդիկ ազատ են այս կամ այն կրօնը ընդունել եւ պաշտել՝ առանց ամենափրք խոչնդոտի անդամ պատահէրլոյ: — Լատին կրօնաւոլք եւ բողդքական քա-

բողիչք աստի օդուտ քաղելսվ՝ ազատորէն կքարողեն գՔիստոս' մինչեւ անգամ թագաւորի պալատի առաջ եւ կուտանց մէջ, որով բաւական ժողովուրդ վաստկած են. 500—600 տունէն աւելի Պիրման քրիստոնեայք կըդտանվին հոգվածէական դաւանութեամբ եւ մեծամեծ եկեղեցիներ եւ երկուց սեռից համար գպրոցներ ունին. ժամերգութիւնը կըկատարեն կէսը Լատիներէն եւ կէսը Պիրմաներէն. քահանայք եւ դպիք գըշթէ բոլորն եւս Պիրմանք են, ունին նաեւ կուսանոցներ, որոց վերակացութիւնը կանեն Լատին կրօնաւորք . . . :

Բաղրական կրօնքով Անգլիայ տիրած մասին եւ բուն Պիրմանստանի մէջ կըդտանուին մօտ 30—40.000 տուն ժողովուրդ. — Այժմեան Պիրմանի (ներկայ) թագաւորն մեծ սէր ունի, կայէն, տեղեկանալ Հայոց կրօնին, որոց համար եւս յատուկ բաղձանք յայտնած է առ Վեհափառ. Հայրապետն ամենայն Հայոց այնտեղ մի ընտիր եւ լեզուագէտ քարոզիչ վարդապետ պուաքելոց . . . միանգամայն տեղական գաղթական Հայերը եւս հովուելոց համար.

Ամենեւին Պիրմանք չեն խորշիր քրիստոնեաներէն եւ շատ կսիրեն իւ-

րեանց աղջիկները նոցա մանաւանդ չայոց կնութեան տալ՝ գիտալով որ՝ նոքա միակին են եւ ցկեանս: — Քրիստոնէից մորթած կենդանեաց միաը անխըտիր կուտեն. իսկ ինքեանք ոչ երբէք կըսպանանեն կամ կըմորթեն զկենդանիս՝ հոգեփոխութեան հաւատացած լինելով: Բայց՝ ինքնին կամ մի արկածիւ մեռնելէն զկնի՝ ամենայն ախորժանօք եւ առանց խղճելոց կուտեն: Ուստի որոյ սիրտը որ ուղէ մի կենդանի մորթել եւ ուտել, գաղտնի մի տեղում հնարքավ կիսեղդէ եւ կասէ թէ՛ ինքնին սատկեցաւ կամ մեռաւ:

(Մեացեալն ի 1877իւ):

## ԵՐԿՐԱԳՈՐԾՎԱԿԱՆ

Կովկասէան գիշական տնտեսութեան ընկերութիւն՝ իւր 25ամեակը տօնելոց համար հրատարակած Յայտարարութեան մէջ հետեւեալը եւս յսւելցուցած է. յորում ուշադրութեան արժանի մի քանի դիտողութիւններ գտնուելով՝ մերազնեայ

բանասիրաց հաղորդելոց համար արժան կհամարիմք Օրացուցիս մէջ ամփոփել։ Գուցէ այս կողմէրում եւս օգտակար կլինի։

Խնդիրներ որոց վերայ դատողութիւն պիտի լինի գիշատնեսական խօսակցուրեանց ատեն կովկասեան Դիդատնեսական ընկերուրեան 25-ամեակը տօսախմբելոց ժամանակ։

1. թէ կովկասի մէջ այժմ զործածուած երկրպարծական գործիւերուն թերութիւնը յորում է։ Ինչ ճնարքներ կարելի է առաջարկել զանոնք բարորելու, եւ ընդ նմ ին սոյս գործիրները բանեցնելու ժամանակ զործադրուած բանորսերուն թիւը թիջնելոյ համար։ Կարելի է արիեօր Վրացւոց արօրն եւ խմէրէթցոյ խոփի փոխել Եւրոպական կատարելագործուած երկրպարծական մերենաներու հետ եւ որդիսիեաց հետ յատկապէս։

Վրացւոց արօրը, ինչպէս որ բայր առաջը ունեցող արօրները անով կրտարքերի, որ զայն բանեցնող բանուորէն չափանանչեր մերենան այնչափ հմտութիւն եւ նարտարութիւն ինչպէս որ կնարկաւորի շատ անզամ առաջը չունեցող արօրներով աշխատելու ժամանակ, բայց նորու տեղ նորու կազմութեան բոյրու պահատութեան ծանրութիւնը կճեծնէ անսանց վերայ, եւ որչափ թերի է այնպիսի արօրին կազմութիւնը նոյնափ առաւել շարժող դորութիւն կապանանչ։

Վրացւոց արօրին գաղափարը յաւ է ըստ ինքեան, բայց զայն զործադրելու համտր ցանկալի է բանի մի փոփոխութիւն անել դէպի լաւը. ա) նորա կազմութիւն

շատ խոշոր է, թ) տախտակեայ ուղիղ տապալին կոչտ շէնք ունենալով, հոդին թանձրութիւնը չէ կարող մանրել եւ կըպահանջէ շատ բանուոր. գ) կարիչը կամ ծերիջ համեմատութիւնը շատ կարճ է և սովորաբար սաստիկ բութ, խխտ մեծ անկիւն կծեւացնէ, անսպէս որ իրօր արօրին զործը դիւրացնելու տեղ կուշացնէ. դ) Լեմեխը թէպէտեւ բաւական լայն, բայց կարճ է. ե) արօրին տակը կամ պատուանդանը տախտակաշէն է, որով, բաց յայնմանէ, որ հոլին բաւուելուն համար շատ բանւոր, կըպահանջէ, այլ նաև միւս մասերուն նըկատմամբ հաւասարապահ զինելիս, շարժումը սաստիկ կդժուարացնէ: այս շարժումը զօրութեան աւելորդ ծափերից է մասամբ Վրացւոնի հովերուն ընդհանրապէս մածողականութիւնը, ըստ որում զըլիառապէս կաւային են, պատճառ կուտան Վրացւոց արօրը զործադրելու համար 8 էն ինչեւ 12 զոյդ եղ բանեցնել, 4 էն ալ մինչեւ 5 եղնավար երեք բառորդ արշին հոյոց թանձրութիւն փորելու համար. զ) առաջը, որ կրազկանայ երկաթ չզարկած եւ շատ անզամ ուղիղ թշչանակի ծեւ չունեցող անիւներէ, սակաւ իւղած եւ կամ բոլորովին չիւղած ֆայտէ լիսեռներու վերայ անցուցած արօրին շարժումը կդժուարացնէ եւ աշխատութեան ծախրը կմեծցնէ: Վրացւոց արօրին վերոյգրեաւ թերութիւնները ի նկատու ունենալով, ցանկալի էր որ կարե ի եղածին չափ նորա շինու թեան աժանութիւնը պահպանելով, զայն կատարելագործած տեսնել այն աստիճան, որ կատարելագործուած արօրը փորելով նոյնչափ թանձրութիւն հոգոյ որշափի այժմնան զործածուածը կվերցնէ,

միեւնոյն ժամանակ զայն կառավարելու եւ քաշելու համար պակաս զօրութիւն պահանջէ:

Տփխեաց նահանգին լեռնային կողմերը կդրծածուի խոփ մէկ կամ երկու զոյտ եզով:

Քութայիսու նահանգին շատ տեղերը գետինը մշակելու համար հասարակ կապմութիւն ունեցող իմէրէթեցւոց խոփ կդրծածուի թեթեւ երկաթակապով լէմէխին վերայ առանց փայտի: Այս գործիքը բանեցնելու ժամանակ նողին միայն վերին երեսը կըքրթուի երկու բթաշափ խորութեամբ, որով հողը չքարծրանար եւ մանրիր. իսկ իմէրէթիոյ շատ կողմերը մանաւանդ ստորին կողմերը եւ վերնա. կողքը լեռանց հարթ ու տափարակ հողերուն վերայ, յորս ըողը ծեւացած է հարուստ զրւէն եկած միացած կեղեւով (հողով), խոր մշակութիւն կպահանջէ:

2. կատարելացդորժուած կասելու գործիքներէն, որոնք առելի յարմար են կովկասեան Տնտեսութեամ եւ մանաւանդ լաւ յարդ ընդունելու համար (մանրած կակդած յարդ):

Ցըրենին եւ զարիի կասելը այժմ այս երկիրն զբեթէ ամենայն կողմը կկատարուի կասելու տափառիներով, որբ ունին հինաւուրց կազմութիւն:

Կասելուն այդ կերպը պահանջնուով քազմաթիւ անասուն եւ բանւորներ, դանդաղ եւ յոգնեցուցիչ զործ է: Յորենը կասելու ժամանակ տեղական եղանակաւ բաց ի բատիկները հասկերէն բաժնելու, որիիշ Նըպատակ եւս կայ, յարդ ընդունել, բաց այնպիսի մանրած եւ կափցուց ճարդ, որպէս զի կարողանայ խոտին տեղը բըռնել, որ երկրի մէջ սաստիկ թանկ է յահախ չըրութիւններու, զօրծաւորաց թան-

կութեանը եւ տեղէ տեղ փոխադրելու միջոցներուն պատճառաւ:

3. Երկրին բնակչաց սնունդը ապահովելու միջոցներուն վերայ:

Անդրականվասեան աշխարհնին բնակչաց շատերը շատ անգամ կենթարկուին եթէ ոչ կատարեալ սովի, գոնեա հացի զգալի պակասութեան:

Կան այնպիսի գաւառներ, ինչպէս են թելաւի եւ մանաւանդ Սղնախինը Տփխեաց նահանգին մէջ. որբ զբեթէ երբէք չն հասցնել այնչափ հաց, որչափ կհարկաւորի տեղական գործադրութեան համար, ուր ցորենի կոտը (երկու փութ 10 ֆունդ) շատ անգամ երեք ուուրմիէն վեր կինի եւ կհասնի մինչւ 10 ուուրմի, որն որ գիւղացւոց համար հաւասար է սնունդի պակասութեան եւ սովի:

Այն տեղերու բնակչաց սնունդը ապահովելու միջոցներ գտներու համար, յորս անընդհատ կերպով կզգացուի հացի պակասութիւն եւ կամ նորա աւելի կամ պակաս յանախսութեամբ կրկնուող անսպազմաբրութեան տարիները սովի կենթարկուին, ցանկալի բան է այդպիսի երեւոյթներու պատճառները բացատրել եւ կամ զանոնք խափանելու հնարքները գտնել բնակչաց զրութիւնը թեթեւացնելու համար, ըստ որում այն երեւոյթները անխուսափելի են:

Այս մասին հետեւեալ խնդիրները կարու են բացատրութեան թէ որչափ պաշար կերու կրու (ցորենի. սիսեւի, լուրիայի, գետնախնձորինոյ) կպահանջուի տեղույ մի սնունդը ապահովելու: Որչափ պաշար կերպայ տեղական հաստատուն բնակչաց եւ ըրչափ ցորեան եւն. կերթայ արուեստական պատրաստութեանը (ցրահանութեան

և զարեցրոյ գործարաններուն) եւ անսանց սննդեանը համար. ուր կյուղարկուի զիխաւորապէս հացը առաջ եղած ժամանակը կամ իր կարեւոր կդատով նեղութեան ատեն փոյ ծեռք բերել նացի փանուրէն: Ցորենի առեւտրոյ կերպը: Բնակչիները սովորութիւն ունին արդեօք ցորենի պաշար թողուլ: Որչափ մեծ են այդ պաշարները: Խնչ զրութեան մէջ են ցորենի շտումարանները:

Ցորեան ցանելու համար մոջափ փող ըլուուած է, որչափ մեծ է միջին պտղաբնրութիւնը, որչափ տարածութիւն հողոյ եւ քանակութիւն հացի միջին պտղաբնրութեան ժամանակ կուգայ իւրաքանչիւր հոգուոյ:

Կարելի է ալոդեօք մշակութեան չափը աւելցնել, եւ կամ թէ հարկաւոր չէ արդեօք վարելահողերը խոտարեղի զարձնել: Որոնք են պտղաբնրութեան (թերոց) պատճառները: Հոդոյն կազմութիւնը բարւոքելու համար վան արդեօք մեռնուու հրատակութիւնը եւ կամ կրկին հերկում ն, աւելի բարեխնամ տափանելու նդանակ, շնչու հերկելու գործիքներ, կոշտ հողերը մաճելու զմաններ: (Վնասակար հնտեւանը վինի արդեօք կոշտ հողերը մաճելէն եւլն:) Հարկ չէ արգեօք փոփոխութիւն ժամանակի այս կամ այն մշակութիւնը կատարելու ժամանակ: Գարանն թէ աշնան ցանքերը աւելի կնեղութիւն կիմաստին չըրտենէ, սառուէ կամ ցրտաճարութենէ: Սրդեօք կարելի եւ հնարաւոր չէ ջրել զանոնի եւ կամ ոռողելու նդանակը բարւոքել:

Միկ հողմոց ենթակայ նղող դաշտերուն վերայ օգուտ վկրնար թերել արդեօք իրարմէ չափաւոր հեռաւորութեամբ կարգ ծառեր կամ թուփեր տնկել եւլն: Արդեօք մշակութեան բայսերը իրարու հետ փիխանակելու հարկ միայ (ցորեանը ծառուով եւլն,) ի զործ դնել արմատապլտուղ թոյսեր, խոտի ցանք: Հարկաւոր չէ արդեօք ընտեսութեան նդանակին փոփոխութիւնը ընդհանրապէս:

Զանազան բուսոց հասնելու ժամանակը եւ զաներ ծողովելու տեւողութիւն: Հաւաքումը փութացնելու համար չեն կարող արգաօք զործադրութիւն հնծոց մերենաներ: Մրեօք չի վնասեր ժօղոված ցորեանը, նոյնպէս կասուածը, և որպիսի հնարքներ կարստ են զործադրութիւն անոնց աւրուելուն առջեւը առնելու համար: Խնչ եղանակաւ կարելի է ի ժամանակին հաւատատի եւ լիակատար տեղեկութիւններ ծնոր թերել թերոց երեւութիւն վերայ եւ անոնց նիշտ չափը իմանալ: Խնչ թերութիւններ կամ ցորենի առեւտրոյ կազմութեան մէջ եւ որպիսի հնարքներ զանոնը բարւոքելու համար: Որ տեղերը անծրաժեշտ են պաշարի շտեմարաններ եւ պաշարներու բանակութիւնը հրաւափ մեծ պիտի լինի: Անհրաժեշտ եւ հնարաւոր չէ արդեօք պաշարը ժողովելու կարգաւորութիւնը, նոյնպէս զանոնը պատելու կամ զուրու տալու նկատմամբ ընելիք բարեկարգութիւնները:

Որ տեղեր փիխանուկ ցորենի պաշար խսկապէս ունենալու համար պէտք է կազմուին պահպանողական դրամաղլուխներ եւ ինչ չափով: Վոլցայի վերայէն կամ Ալզովի եւ կամ Սեւ Շովի նաւահանգիստաներէն ցորեն հասցնելու հնարքները թեթեւցնելու միջոց-

ները որոնք են: Արդիօք դժուարութիւններ չկան ցորենը հասցնելու ժամանակ փոթի—թիջիվեան երկարութիւնները եւ որոնք են այդ անշարմարութիւնները խափանելու հարաները: Սնունդին առժամանակեայ պակասութեան տաեն ինչ չափով կարելի է յուսու գինուորական ինտէստանդեան տեսչութեան վերայ:

4. Կովկասի այգեգործութեան յաշողակ ընթացք տալու հետքներուն եւ տեղական գինեները ուրիշ տեղ վաճառելու վերայ:

Մեր այգեգործութիւնը բարձրացնելու ամենէն լաւ հնարքը կովկասի գինիներուն վաճառման ապահովութեան վերա հիմնուած է: Կովկասու գինիներուն համբաւը եւ նոցա ունեցած առանձին յարգութիւնը եւ հաշակը զինաւոր ասպահովութիւն կը համարուին անոնց վաճառման յաջողութեանը: Կախեթու գինին, որպիսին ուաւարական անուամբ յայտնի են նույսաստանի ներքին նահանգներուն մէջ եւ մասսամբ իւթիք աշխանահանանդէսներու պատճենու արտասահմանի մէջ, մեր կովկասեան գինիները կասմէր, նոցա ներկայ առեւտրոյն նայենվ չեն կարող հեռու տեղեր վաճառուի: Նոյն իսկ կախեթի տոհմական գինիները ի վաճառման միշտ միակերպ արժանաւորութիւն եւ նոյն յատկաւթիւնն չունին: Ուստի խնդիր կենչէ թէ ինչ կերպով կարելի է այնպէս ընելու որ ծանօթ գինիները վաճառականութեան մէջ իւրեանց հաստատուն եւ յատուի անուանականութիւնները ունենան եւ իրենց անփոփոխ յատկութիւններ պահպանին: Ինչ հարկաւոր է որ գինուոյ մը յատկաւթիւնը տարրուէ տարի նոյնութեամբ պահպանուի, եւ միեւնոյն

տեսակին յատկանիշն վերան մնայ հաստատուն: Ինչ ընելուէ որպէս զի կախեթի գինուոյ անունով ուրիշ տեղերու գինիներ չծախուին, նոյնպէս ուրիշ տեղ համադղները:

Մեր գինեգործութեան մէջ որպիսի է ական թերութիւններ կընշմարուին, նոյնպէս զանոնք խնամելու մէջ, եւ որպիսի կատարելագործութիւններ պէտք է լինին, որպէսզի կարելի լինի զանոնք հեռաւոր վաճառաւ նոցանար յուղարկել: Հարթաւորութիւն մէրնենար նոր ամաններ կամ գործիքներ մոցընելու, նոյնպէս լաւ գինատուններ շինելու:

Կարելի չէ արդեօք այս մասին ի զործ զնել համարուեստից ընկերութեան սկզբունքը: Օգուակար մինիր արդեօք հասարակական մասաններ շինել, որպազի այնտեղ այգենեսք բերեն խաղողը ինչպէս որ կալը կրերեն համարուեստից ընկերութիւնը եւ որպէսզի խաղողին ընտրութիւնը, զայն կոխելը կամ ճզմելը, զինւոյն վերայ հնկազութիւնը բանագէտ գինեգործի վերակացութեան ներքրյ կատարուէին, զոր կարելի էր վարմէն տեղուոյ մը այգենեսք ընդհանուր վարծովը: Որպիսի նարք կարելի էր զօրծադրել գինիներուն տեղէ տեղ վոխալղութիւնը ամանցնելու համար:

Ունելով ի նկատի շրդնեաւուց եւ երկարութեաց կառավարութիւններուն անուշաղութիւնը նոցա յանձնուած բեռք փոխադրելու մասին, որովհետեւ զինին տեղափողութեան եւ վատ եղանակի նկատմամբ փափուկ ապրանք է, պէտք չէ արդեօք միջնորդել որ շողենաւուց եւ երկաթու հետո ընկերութիւնները պարտաւորեն միջոցներ մեծութեան ու առաջարկութեան մէջ, նոյնպէս եւ ապրանքը ընդունելու շտեմարաններուն մէջ վատ ե-

զանակի աղցեցութէնէն պահպանուի. որպէսի հասցենու միջոցը ըստ կարելոյն կարծ ինի, կառավարութեան սլատախանատութիւնը, որ իւր վրայ կընդունի գիւղոյ փոխադրութիւնը, աւելի ծիշա որոշուի եթէ զինին վասուի կամ պակսի, եւս եւ փոխադրութեան զինը բատ կարելույն ցած լինի: ինչ զժուարութիւններ կտեսնուին հասարակ ճանապարհներու վերայ գինին փոխադրութիւն ժամանակ եւ ինչ պակասութիւններ տեղական փոխադրութան միջոցներուն մէջ, եւ որ հնարիններ կարելի է առաջարկել զանոնը վերցնելու համար:

Մեր առեւտրոյ եղանակին մէջ ինչ թերութիւններ կնշարուին եւ այս մասնինչ նշանակութիւն կարող է ունենալ ընկերակցութեան սկզբանց գործադրութիւնը: Դորդոյն յաջողութանը համար անհրաժեշտ է շինն լրա ապամոքի շտեմարաններ տեղաւորոյ կենցրոնական տեղերը եւ ճանապարհի վերայ (երկարուղոյ ընթացքով հագուա, Ցարիցինի, Քաջանի, Նիժնի-Նովգորոսի մէջ եւն), որպիսի տեղեր պէտք է շինուին այդպիսի շտեմարաններ, ինչ կերպով եւ որպիսի միջոցներով կարելի է արդեօք մեր զինու առեւտրոյն մէջ մուրհակներու գործածութիւնն մտցնեն որպէս զի գինի զրկողները անոր փոխարէն ստանալիք գումարին մէկ մասը լիանաւցած ստանային, իսկ զնողը փողը համար բանի մի ամիս ժամանակամիջոց ունենար, որպիսի փոխառութեան հաստատութիւններու կամ փոխադրող ընկերութիւններու զտանալ պէտք է այսպիսի ժամանակ եւ փոխառութեան համար որպիսի պայմաններ եւ զըրաւականներ պէտք է դրուին:

5. Այդիները, վարելանողերը եւ մարդացեսինները կարկտահարութիւնները բրկին բանի մի տեղերը ան ու դող կը-նզն դիւղատիրոց վերայ իւր բերքին նը-կաստամբ, որ շատ անզամ իւր գեղեցիկ ակնկալութիւնները կատարուելուն մէկ օր առաջ քանդրուած կտեսնէ ենթարկուելով անդառնակի վնասուց եւ անփառաբիննելի դրութեան: Ամենէն աւելի, կարկտահարութիւններ կիմսասուին այցինները կանեթիոյ (թէլաւի եւ Սղնախի գաւառաց Տփխեաց նահանդին) փարելահողերը եւ խոտպտեղինները Աղէրսանդրապօլի գաւառի (Երևան նահանգին մէջ, նոյնպէս բանի մի ուրիշ տեղեր երկիրն զանազան կողմերը եւ շատ ըիչ տեղեր կզունուին, որոնք ավատ լինին կուկտահարութիւններ: Ապահովագրութիւնը հողերուն, այգներուն եւ մարգարետիններուն ի կարկտահարութիւններ միակ օգնութիւն կարող է համարուի այս զժբաղտութեան զէմ: Մեր մէջ կարելի է արդեօք կարկտահարութեան ապահովագրութիւնը եւ ապահովագրութեան որ տեսակը յանուանի կարող է զործադրուի մեր երկիրն մէջ, կարելի է արդեօք գործադրուի փոխառած տեղուարտի պատաւարկան ապահովագրութիւնը, թէ հարկ է զառնալ ապահովագրական ընկերութեան մը: Ապահովագրութիւնը միան անդրակովկասեան երկիրն թէ բարոր փոխարբայութեան վերայ այէտք է տարածուի: Ինչպէս կարելի է ծառութենամբ համանել ապահովագրական վարձատրութեանց չափը եւ ինչ բանակութեամբ: Եթէ օգտակար հսմարաւի զառնալ զտնուող ապահովագրական ընկերու-

թեանց մէկուն ներքին Ռուսիոյ կամ ար-  
տասահմանի մէջ, այդ ատեն մեր գիւղա-  
տէրերը պէտք է առանձին միջովներ ծեռք  
առնեն, այս ինքն հողատեարց իրարու հետ  
համաձայնութիւնը, կանխազոյն յարաբե-  
րութիւնները եւ այս ընկերութեանց հետ  
ունենալիք համաձայնութիւնը որոնք պիտի  
լինին:

Թարգմանեաց ի Ռուսերեկէ  
ՍԱՐԳԻՍ ՄԱՐՈՒԹԵԱՆՑ.

\* Աւելի կտրուկ ճանապարհ եւ  
խիստ լաւ գործնական միջոց չըր  
գործիքներու եւ մշակութեանց վե-  
րաբերեալ մասերը. Լւրոպայէն  
յարմար եւ համբատիք գործիքներ  
բերելով, ուղղակի Ընկերութիւնն  
ինքնին փորձեր կատարէր եւ գործ-  
նական յաջողած օրինակովն կեն-  
դանի գաղափար տայր եւ խրա-  
խուսէր գժաղովուրդն: Ըստ պատմ  
ուրիշ բաներու մէջ եւս: Որովհե-  
տեւ առանց փորձի եւ ձեռնհաս  
տեղէ մի զօրաւոր գործնական օ-  
րինակի, խիստ շատ անդամ ո՞ր եւ  
իցէ խնդրով եւ գործոյ չյաջողութիւր  
ապացուցուած հշմաբտութիւն է:

Ե. Հեղ. Օրաց:

5410

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴՐ

Օրացուցի մի քանի հարիւր օրինակաց  
մէջ տպագրական մոռացմամբ Տեսողնդա-  
ռաջի եւ Ս. Աստուածածնի ի յԱննացէ  
ծննդեան աւուրց Կիրակենշանները (†)  
չ տպուած:

Նաև Ս. Գէորգեայ զօրավարի Քա-  
չամարտիկ Օրհնութիւնը եւ առաջին  
կուսաւորչացն Հայաստանեայց Ս. կե-  
ղեցոյ Թաղէոսի եւ Բարթուղիմէոսի ա-  
ռաքելոց Աճրսկիզբն Օրհնութիւնը իւր  
սարօն դտանելով ի հին ծեռագիր շարա-  
կանս, տպագրեցար նորատիպ ձայնագրեալ  
շարականի մէջ, ուստի եւ ըստ այնմ նը-  
շանակեցաք ներկայ տարւոյս Օրացուցի  
մէջ, սակայն ուր որ ցունուիր ձայնա-  
գրեալ նարական եւ չեն կարող երդել  
ըստ ձայնագրելոյն, առ այժմ ներելի է  
Ս. Գէորգեայ զօրավարի տօնին Ամե-  
նասուրք եւն. եւ Ս. Թաղէոս եւ Բար-  
թուղիմէոս առաքելոց տօնում երանեկի  
եւն. Օրհնութիւնը իւր սարօն երգել:

ԳԻՆՆ

ՀՀԽ

(1959)  
0 - 83